



## ԽԱՇԱՏՈՒՐ ԿԱՆԱՅԱՆ

### ԷՇՄԻԱԾՆԻ ՆՎԻՐԱԿՈՒԹՅՈՒՆԸ ԺԼ ԴԱՐՈՒՄ (Պատմական ակնարկ)

Նվիրակության մասին շատ քիչ տեղեկություն ունենք. մեր եկեղեցական պատմության այդ մասը դեռ չէ ուսումնափրկված: Նվիրակության պատմության վերաբերյալ շատ ու քիչ հյութ ունենք ԺԼ դարու Բ կիսից—այն էլ ու. Գյուտ քահանա Սղանեանի հրատարակած «Դիանուերից», որոնցից և մեծապես օգտվում ենք: Նվիրակության ծանրկման շրջանն էլ հենց այդ ժամանակամիջոցը պետք է համարել:

ԺԼ դարու նվիրակության պատմության Ա կիսի համար, հակառակ իմ շանքերի, գորեթե չկարողաց բան գտնել. այնպես որ մի ընդհանուր տեսություն տալուց հետո՝ ինձ մնում է Ղազար Զահիեցի կաթողիկոսի ժամանակից (1737—1750) սկսել ու տանել մինչև Ղոկաս կաթողիկոս (1780—1799):

\* Սիրով ենք հրատարակում Ա. Էջմիածնի Գևորգյան ճեմարանի երրեմնի ուսանող, վաստակաշատ մանկավարժ, նմուտ գրականագետ-բանասեր և «Էջմիածն» ամսագրի հարգելի աշխատակից, հանուցյալ Խաչատոր Կանայանի արժեքավոր սույն պատմական ուսումնափրությունը, որը սիրով խթագրությանն են տրամադրել հանգուցյանի հարացաւուները:

#### I Ընդհանուր տեսություն նվիրակության մասին

Տասնեւորսերորդ դարու վերջերին, Ալեք Զ-ի մահվամբ (1393), հայր կորցրեց մի անգամ ընդ միշտ յոր քաղաքական անկախությունը և կապվեց այն մրս մեծ կազմակերպության, որ եկեղեցին էր: Եկեղեցին, որ քագավորության գոյության ժամանակ ևս ուներ յոր ներգործական դերը հայ իրականության մեջ, ներկայանում էր որպես զորեղ կազմակերպություն՝ հայերին ի մի ձողերու:

Քաղաքական անողոք ճակատագրից հայածկած հայությունը ցրվում է աշխարհի զանազան կողմերը: Սակայն կար Հայատանում դեռ մի զորեղ Հաստատություն՝ հայոց եկեղեցին, որ կարող էր յոր ցրված հատվածների հանգույցը դառնալ:

Մեծ է եղել հայոց եկեղեցու դերը մեր պատմության մեջ: Հիմա նա պետք է կարողանար աշխարհի չորս կողմում ցրված հայության համար հանդիսանալ պահապան Բրեշտակ՝ գերծ պահելու հրան ամեն արհավիրքներից, պետք է կարողանար կատարյալ տարագիր որդոց միսիարիչ հանդիսանալ:

Եկեղեցական մեծ հիմնարկության կենտ-

րոնք ս. Էջմիածինն էր: Նա այն ջահն էր, որից լուս շղեր էին տարածվում ցրված հայության խալկարչութին անկյունները:

Այդ ժամանակիվանից սկսած, ահա, ըստ ամենայն հավասնականության, առաջ է գալիս մեր եկեղեցական կյանքում մի զորեղ գործոն, որ հապնդի է Ավիրակություն անունով: Այդ գործոնի շնորհիվ այնուհետև շենանում, պայծառանում է Էջմիածինը, որանու կապվում են հայության բոլոր հասվածները, որոնք նրանով ոգևորվում, նրա սիրով արտահայտում էին իրենց ազգային հայութափական գացումները:

Արդ, ի՞նչ է Ավիրակությունը և ովքեր էին Ավիրակները:

Նվիրակ բառը անտարակուս առաջացել է նվեր բանից, որովհետու Ավիրակության պաշտոնի մի մեծ իմաստն էլ այն էր, որ Ավիրակներն իրենց շրջագայության միջոցին նվերներ էին հավաքում ժողովորից Մայր Աթոռի համար. որինեն Ավիրակ (Երբեմն էլ Ավիրակոյ) հշանակում է նվերներ հավաքոյ: Սակայն, Ավիրակ բառը նվեր բանից ծագելով դարձել է արդեն մի հասկացողություն—եզր, որոշ գաղափարի արտահայտություն:

Նվիրակները եպիսկոպոսներ կամ վարդապետներ էին, որոնք ուղարկվում էին կաթողիկոսի հրամանով տարագիր և Էջմիածինի սահմաններից դուրս գտնված հայերի մեջ՝ նրանց հոգևոր միսիթարիչ լինելու կաթողիկոսի կողմից և բարեկացն ժողովրդի կամավոր տուրքը ժողովելու ի պայծառություն և. Այսուհի:

Նվիրակները դուրս գալով Էջմիածինից վերցնում էին իրենց հետ մյուռռն ժողովրդին բաշխելու: Առանց մյուռռնի Ավիրակն Էջմիածինից դուրս չեր զա. Ավիրակության պաշտոնի հետ անհրաժեշտորեն կապված է և մյուռռնի բաշխման դերը: Նվիրակները իրենց հետ ունենում են նաև Ավիրակական կոնդակ, որով մի փաստաթուղթ է տրվում հոգևորականի ձեռքին՝ թե նա Ավիրակ է և ս. Էջմիածինց, կաթողիկոսից է ուղարկված: Այդ կոնդակն ևս անհրաժեշտ է, որովհետու բազմաթիվ հոգևորականներ դեմուց-դեմինից դուրս են գալիս և Ավիրակության անվան տակ սկսում են շահագործել ժողովրդությունը և ս. Էջմիածինի վարկը գցում: Նվիրակներից նրանք, որոնք եպիսկոպոս էին, վերցնում էին իրենց հետ նաև մի-մի վարդապետ կամ սարկավագ որպես օգնական, կամ, ինչպես ասվում է սովորաբար, սպասավոր: Բայց պատահում է, որ վարդապետ Ավիրակներն ի ունենում են իրենց հոգևոր սպասավորները:

Այսպես՝ ծանրաբեռնված մյուռռնով, հայրապետական, սրբատառ կոնդակով, բազ-

մաթիվ թղթերով, որ գրում է կաթողիկոսը գանձագան հայ իշխանների, Ավիրակը դրւու է գալիս և. Էջմիածինց և դիմում դեպի յուր վիճակը նվիրակելու:

Կային Ավիրակության համար որոշ թեմեր՝ շրջաններ, որոնց յուրաքանչյուրի համար նշանակվում էր մի-մի նվիրակ: Նվիրակը սովորաբար ալտոք է իր գործը կատարել և վերցացներ երեք տարվա ընթացքում, բայց առ երբեմն մնում էր երեք տարուց ավելի:

Գնում էին Ավիրակները, սակայն նրանց համար ճանապարհին առաջանում էին դժվարություններ, արգելատիթ հանգամանքներ: Հաղորդակցությունները կատարվում էր կարավաններով, այլ միջոց չկար: Նվիրակները երբեմն ավագակային խմբերի ձեռն էին ընկնում, երբեմն ընության արհավիրքներին ենթարկվում: Բայց տանում էին նրանք բոլոր տաճաչաբները և, հարթելով իրենց սուած պրծած խոշնութենքը, մտնում էին վիճակները՝ իրենց սրբազն պարտքը կատարելու: Նրանց կրած նեղությունների մասին իրեն օրինակ հիշենք այստեղ Հնդկաստանի Ավիրակին պատահած դեպքը ծովի վրա՝ Հնդկաստանի այդ Ավիրակը՝ Հնդկանես եպիսկոպոս Պոնտացի, որ ու-

<sup>1</sup> «Նվիրակության թեմերի ցանկ կարելի է գտնել «Զամբողություն», էջ 44—51 և «Դիման», Գ, էջ 789—806: «Դիման» մեջ եղած ցանկը կազմվել է Սիմեոն կաթողիկոսի նախապատիկ սպասավոր Ակրուի արքապահկոպսի սահմեկ Երեմիա Օշականցի նոտարը, որը վերջը արքապահկոպս դարձավ: Այս ցուցակը կրում է մետական վերնագիրը. «Աստուածակառոց մեջի Աթոռոյս սրբոյ Էջմիածինի համայն նոփրակաց յաղագ նոփրակական արդեանց շրջագայելի քաղաքքն հանդերձ գիտաքաղաքոք նոցին, ըստ յատուկ յատուկ անուանց մի ըստ միջոց առուագիրնեա»: Այնունետև թվում է մեկ-մեկ Ավիրակական յուրաքանչյուր թեմերը և դրանց մեջ եղած քաղաքները, զյուղերը կըն: «Զամբողի» և «Դիման» ցուցակներն իրարից թիւ տարբեր են ձևի, անունների և մասամբ բովանդակության կողմից:

Նվիրակության թեմերի մեջ կան տեղեր, որ կոչվում են «Տէրունի»: «Տէրունի» կոչվում էին այն զյուղերը իմաստ բաղաքները և կամ նամայնքները, որոնց նաստյան անմիջապես Մայր Աթոռ էր գնում և իրենք պատկանում էին անմիջապես և. Էջմիածին: «Տէրունի» կոչվում էին և կաթողիկոսական թեմերը, որոնց առաջնորդներին ինքը կաթողիկոսն էր նշանակում ողջակի՝ և ոչ մի պետության չեին առաջարկվում նախատության համար. այդ թեմերի եկամուտն էլ և. Էջմիածին էր պատկանում: Ուսամայոց թեմերից պատկան ակսած մինչև այժմ նրեանի թեմը (ծագութ. «Դիման», Գ, § 56):

դարերկած էր Հակոբ և Շամախիեցի կարուղիկոսի (1759—1763) կողմից, գրում է մի համակով յոր գլխովն անցած փորձանքը<sup>2</sup>: 1762 թ. հունվարի 20-ին նվիրակը և յոր ուղևորները Բայրախց նաև են հատում և, 40 օր գենարոց հետո, համառն Հնիքաց Բանտար Սուրայք քաղաքը, որ նվիրակը, բավական ժամանակ մնացող հետո, աշարտում է այնուղին նվիրակության գործը և ապրիլի 24-ին դորո գալով Սուրախց համ է հատում Կալկաթա գնապու: Նավում բացի նվիրակից կաման և բազմաթիվ մարդիկ: 60 օր ծովի վրայով գնուու են և հազիվ թե մոտենում են Կալկաթային, այնուու որ «ի հեռասանել աննարդարնակ և ատայի ցամաքը երկիր և համ այնչափ մեռի կայր ի ցամաքէն, որպէս ի Սրբոյ Աթոռոցն միջնու ի Եթուան քաղաքն որքան է, Ենիշահ էր մեռի համ ի ցամաքէն», —և ամս մրցիկ է բարձրանում, ծովու ավելոծվում է և հավը տաշեղի հման այս ու այն կողմն է շարքում: այելոծության ժամանակ շատերը փողքիկ հավակներ կամ գերաններ հատում ազատվում են, իսկ մեր նվիրակը մի բանի ըարդկանց մեռ դեռ մը բանի օր էլ մուստ է ահարկու ծովի վրա ընկղման հավակի մեջ: Քիչ մեռ համի մասերու էլ բաժանվում են և նվիրակը յոր մարդկանցով, Աստուծու օգնությամբ, մի տախտակի վրա ընկած ցամաք են դորո գալիս և երեսն ի վայր ընկերով սողոթում են Ազգայարար Աստոծուն: Նավի մեջ եղած մարդկանցից ազատվում են՝ հայերից 5 հոգի, որունցից մենք նվիրակն էր: Ծովու են ընկետում նվիրակի սեղուկը, որի մեջ էին գտնվում սրբագույս մոտունը, և եպիսկոպոսի գրքերը, կրծքակը և այլ բենեթը: Բայց մոտունը վերջու դորու է գալիս ծովի ափ և գտնվում է: «Եսաց մինչ ազատեցաք ի ծովեն զկնի երկու առորդ վարդապահ պասին—գրում է նվիրակը—երեքշարքի օրն, ի յառաօտեան ժամուն, ի ծագելու արեգական, մինչ օհայաց լեզր ծովուն, բայնեմաս անճառնիրաց սրբանշեկորչ Աստուծու, բանկարծակի գրտար զՄքրաղոյն Մեռուն ամրող և անարար իր ամանուկն և մուշամպուն կապեալ և յարով կիբեալ, որպէս որ էր յառաջագոյն, Ենիշակու անարատ գտար. և ի հիմն ժամուն եղեալ գնութիւն մեր ոչ կարեամ գրով պատմել: Առո՞ Ենին ասեսուշտի (=սնուուկ) մէջն բազում գիրը կայր, թող գենասուն և զայ ամենայն ինչներ, բայց ամեննին մէկ զայ դորու ոչ ենին, և ոչինչ գտար, բայց միայն զՄքրաղոյն Մեռուն գտար, և առեալ

զնան մեծաւ ցնութեամբ և բազմաւ որախոցեամբ գնայաք»: 40 օր շրջում են ծովելերքում և հանապարի են փնտորում որևէ շենքի մոտ գնայու համար, սակայն ապարդումն: Գիշերը մոտիկ անտառից առուծ է գայիս և նրանց խմբակից մի բանիսին ուսում. կամից նրանք գիշերները բարձրանում են ծովելերու բանած մի բանի ծաների վրա, իսկ ցերեկներն իշուուն: Այդ ուսումն նրանց կերպություն էր խաչախսն և այլ «ծծմուկը», և այն էլ ոժվարդույամբ էր ճարվում, ուսում էին վշերի պատղեներ, իսուն երեսն էլ սատկած «չերան» էին գտնուուն, որը և նուս էին ուսում: «Եւ այսպիսի դաշնությամբ անցուցար զկեան մեր միջն ի 40 օր», գրում է նվիրակը, «որ և 2 ամին նաց ոչ կերպ և գրուսն մեր սատկած սակերպու, և ամենայն հանդերձք մեր փոտեցան ի յառատակու մեղման մեր անձնաց և կերպարանքն տեսութեան մերոյ այսանդական էր ի մարդկացին տեսութեան, և դարձեալ լաք իբրև զվարենի կենդանի, և վերջին յշուառութեամբ մերձ էար ի դուռն մասնու: Ի վերջու նրանք ազատվում են պատահամբ մի անգիտական մեծավորի ձեռքով, որ զրբով այն կողմերն էր եկել: Անօդիացին առնում է նրանց յոր մոտ, հյուրախրու և համապարի դեռու յորպահանչութիւնի իր տեղը:

Այս համակը, ըստ մեղինակի, գրված է սեղմ կերպով՝ պատճառ թերեղով, որ չէ կանեմու երկարաբանել, որովհետև կարող է ձանձրացնել Վեհին և զամազան ընթերցողներին: Նամակի վերջը գրված է այսպէս: «Գրեցա ձեռամք իմով ի յերկիրս Հնիքաց, ի Բանկարայ՝ զատարին, ի Սէջինապան կոչեցեալ քաղաքն, ի թուականին Ումժք (1763), ի տեսուար ամսեանու 15, յօրն ս. Ասրգու պասի շորերշարքի Ս. Էջմիածնի անարժան նուիրակ և Գերափառ Տերութեաներ, անսպիտան ծառայ Յովհաննեսկ վարդապետ Պոնտացի»:

Անս պասիսի նեղություններ կրելով, երբեմն, համառն են Էջմիածնի նվիրակները որոշված վայրը և սկսում իրենց գործութեալը: Սուրբ մոտուն բաշխելով և Սթոռի

<sup>3</sup> Պէս կապս (բառ «Ծաղիկի»):

<sup>4</sup> Ժէ, ԺԸ դարերում, գուց և առաջներն էլ, և ամիսոպաներն և ամսատիք «վարդապետ» են կոչուում: Արտակ է և Սիմեոն կարութիւնուի հիշատակարանու, որ համարայ թէ եպիսկոպոս անուն չէ հիշվում, այլ ապամ է այսինչ վարդապետ, չնայուու որ այլ վարդապետը եպիսկոպոս է: Վարդապետ բայց բու մորով է գործածուն այլ շրջանու, բարողոյն մինչեւու սկսմ «վարդապետ» ասում ենք կուսակրոն բանապահն, եթե նոյնիսկ սա բարովիչ է չինչ:

<sup>2</sup> Այս համակը տպամաս է: «Ծաղիկ» թերթուն, 1904 թ., № 5, «Հնիքաստանի նվիրակի մը արկածները» վերնագրով:

համար նվերներ հավաքելով նրանք վերահասու են լինում ժողովրդի ցավերին, քարոզում, միջթարում են նրանց: Ահա մի տեղ հայտնվել է ճեզվիթ կրոնավորը, որ, պղտորելով ժողովրդի միտքը, ուզում է դավանակիս անել նրան. իսկովն վրա է հասնում էջմիածնի նվիրակը և մոլորյալ ժողովրդին ուղիղ ճանապարհի բերում՝ հորդորելով հարազատ և հավատարիմ մնան իրենց եկեղեցուն, հնագանդ Ամենայն Հայոց կաթողիկոսության: Որպեսզի նվիրակը կարողանա զերծ պահել ժողովրդին զանազան գառնազօքեատ գալիքից, օտար հավատի քարոզիչներից, պետք է որ ինքն էլ քաջ տեղյակ լինի հայոց եկեղեցու դաշտանության և նրա ուսմունքին:

Ժողովրդի մեջ ծագած վեճերի, կոփիվների հանրարտեցնողն է նվիրակը. իսկ եթե վերջինիս հետ է վեճ ունենում ժողովուրդը, այն ծամանակ նրանց դատը հանձնվում է մեկ որիշ նվիրակի: Վերջին տեսակի նվիրակը, որ հաճախ ողարկվում է շատ նվիրակների մոտ՝ նրանցից հավաքում հասուլութերը, կոչում է «Ընուիրակ նուիրակաց»: Այսպիսի «Նուիրակ նուիրակաց» է Ղազար կաթողիկոսի ժամանակ Սատապացի Ղազար վարդապետ (Դիան, Գ, էջ 27):

Նվիրակները հաստատուն բնակավայր չունեն ինչպես առաջնորդները. նրանք շրջում են միշտ և վառ պահում ժողովուրդի մեջ հայի հավատը. նրանք ներկայանում են տարածիր հայության մեջ որպես փոխանորդներ կաթողիկոսի, վերջնին կողմից բերան են հանդիսանում ժողովրդին:

Զետքը է շփոթել այն ժամանակվա առաջնորդ և նվիրակ գաղափարները: Առաջնորդը հատում էր վանքում կամ քաղաքում և հանդիսանում էր Մայր Աթոռի ներկայացուցիչ՝ որպես վարչական պատուհայ, թե՛ հասարակական և թե՛ եկեղեցական գործերում. իսկ նվիրակները մնայուն վարչական պաշտոններ, այլ նրանք լոկ բնակչության եզրակացությունը հաղորդում էին անմիջապես կաթողիկոսին: Կաթողիկոսի և նվիրակի միջև եղած թղթակցությունն անսպակա է. նվիրակը յոր ամեն մի քայլի համար աետք է տեղեկություն տա թղթով կաթողիկոսին:

Յուրաքանչյուր նվիրապետական շրջան ունի յոր գանձարանը, որ հավաքվում են Մայր Աթոռի անունով ժողովված բոլոր նվիրները, թե՛ դրամական և թե՛ այլ տեսակի իրենք: Գանձարաններն ունեն իրենց գանձապետները կամ գանձապահները, որոնք հշանակվում են կաթողիկոսից անմիջապես կամ նվիրակի միջնորդությամբ՝

տեղացի հայտնի անձերից: Այսպես՝ նվիրակը յոր ժողովված արդյունքները, որ լինում էին փող, երկաթեղեն, ցորեն, գարի, զանազան թանկագին քարեր ու մետանձեր, կենդանիներ՝ ոչխար, ձի, եղ և կեն հանձնում է գանձապետին, որը և փոխադրում է էջմիածնի, կամ վերադարձին նվիրակը ինը յոր մետ տանում է Մայր Աթոռ հավաքած նվիրները: Նվիրակը լինելով կաթողիկոսի եղեկայացուցիչը՝ շատ անգամ յոր վկայությունն է հայտնում մի ինչ-որ վարդապետի եպիսկոպոս ձեռնադրելու արժանավորության կամ ապիկարության մասին: Նվիրակության միջոցին եպիսկոպոս նվիրակը յոր սպասավոր սարկավագին վարդապետ է ձեռնադրում ժողովրդի քազմության առաջ, որպեսզի այսպիսի հանդեսներից զորկ չմնա ժողովուրդը: Բացի դրանցից՝ նվիրակներն իրենց շրջաններում, թափառական լինելով, ձեռնարկում են զանազան քարենություններին: Նրանք օծում են եկեղեցիներ, շատ անգամ դպրոց են հիմնում և դաստիարակություններ կարդում, գրել-կարդալ սովորեցնում ժողովրդի տգետ պատահիներին: Նրանք քարեապաշտ ժողովրդի առաջնորդներում ունիած ունկած ուխտավորական խմբեր են բերում դեպի ս. Էջմիածն: Եվ այդ ուխտավճարությունը շատ հանդիսավոր էր: «Հնումը ս. Էջման տեղը և Էջմիածնում այն հշանակությունն ուներ, ինչպես Երուսաղեմի և Հարության տաճարում Փրկչի գերեզմանը և հայոց Հակոբյանց վանքում՝ Գլխադիրը: Նվիրակների առաջնորդությամբ ուխտավորները հետապոր տեղերից և Հոփիսիմյանց տաճարում առաջնորդութեանց քոց դուռն» շարականը երգելով՝ մտնում էին տաճար: Ս. Էջման սեղանի առաջ երգվում էր «ԷջՄիածնն ի Հօրե» շարականը: Հանդիսադիրը, որ լինում էր նվիրակը, քաղում էր փոխ առ փոխ «Ուրախ եղէ ես ոյք ասէին» ի տուն Տեսան երթիցուք» սաղմոսը. սարկավագը քարոզում էր «Սուրբ եկեղեցեաւս». հանդիսադիրն ասում էր «Ի մէջ տաճարիս» աղոթքը և երկրպագում ս. Սեղանին համբուրելով խաչն ու Ավետարանը. սպա «Պահպանիչ»-ով օրինում էր ուխտավորներին, որից հետո սկսվում էր նրանց ուխտադրությունը: Նվիրակության դադարելով՝ ասում է Հուսկի եպիսկոպոս Մովսիսյան՝ հետզհետեւ վերջացավ ուխտավորների իրմրութիւնն ս. Էջմիածնի զալն էլ, և ուխտավորների տաճար մտնելու այս արարողությունն ս.

Է դադարած պետք է համարել ԺԹ դարի սկզբից»<sup>5</sup>:

Այսպես տաճաշանքների, դժվարությունների ենթարկվելով և ժողովրդի մեջ եռանդուն գործելով, բնական է, որ ժողովուրդը պետք է հարգեր, սիրեր Եջմիածին նվիրակներին և բերկրությամբ ընդուներ նրանց: Նվիրակներն այնպիսի տպավորություն են թողել ժողովրդի վրա, որ նրանց անձը բանաւորության, սքանչելի գրույցների հյուր է դարձել: Նվիրակների թողած տպավորության մասին գաղափար կազմելու համար մեջքերենք ԺԷ դարու սկզբին գրված մի բանաստեղծություն, որ գրել է Հովհաննես անոնով մի քահանա:

ԺԷ դարու սկզբին հոռոմեացոց աշխարհն՝ Բյուզանդիոն են գնում և Եջմիածին Յ նվիրակներ՝ Հովհաննես եպիսկոպոս, Սարգիս եպիսկոպոս և Դավիթ արքան, որոնք իրենց գործունեությամբ սեր և հարգանք են առաջ բերու ժողովրդի մեջ դեպի իրեն և նովինիկ համատակյուն են զրոծի համար, որով և մեծ տպավորություն թողնում ժողովրդի վրա: Բանաստեղծությունը պատմողական ձևով և սկզբում է այսպես:

«Ինըն հարիր Հայոց թուական,  
Ֆիոն և հինգ թու աւելեան,  
Եջմիածնէն նուիրակը եկան,  
Բոյոր աշխարհ Հոռոմեց տան:  
Յոյով մեռն կայ ընդ ինքնան,  
Մեծ համակով և օրինութեամբ,  
Եկեալ հասին Բյուզանդիան,  
Որ է Ստամպօլ՝ սրբոց կայան»:

Նրանց, ովքեր տեսնում են, իբրև հիեշտակ են ընդունում, ցնծում-զվարճանում են, վանքերն ու անապատներն իսկ ուրախանում են, եթե տեսնում են Եջմիածին եկած «սրբոց հման» նվիրակներին: Նվիրակները կարդում են իրենց հետ բերած կաթուիլիությունության թուղթը, և ժողովուրդը բերկուում է, նրանց անոնքը տարածվում ամենուրեք:

«Անուանք նոցա համբաւեցան  
Սուրբ օրինութիւններ, որ կարդացուան,  
Եկեղեցիք բերկրեալք ցնան,  
Եւ ժողովուրդս, որ օրինեցան»:

<sup>5</sup> «Տարագ», № 30, 1904 թ., Հուարկ եպիսկոպոսի հոդվածից:

<sup>6</sup> Ուսանավոր տպաված է «Հայոց նոր վկաները» գրքում, հատոր Բ, էջ 17. կազմեցին Մանանյան Հակոբ և Անառյան Հրաչյա, նաև Կ. Կոստանյանի «Նոր ժողովածու», Ա. պատկ, Միջնադարյան հայոց տաղեր և ուսանավորներ, էջ 31:

Ամբողջ Կ. Պոլիս քաղաքը նվիրակում են և ապս նավում՝ դեպի Կաֆա քաղաքը, որ «Կաֆայեցիք խիստ ցնծացան, իբր զառաւալաս տէրունականն»: Նվիրակները շարունակում են շրջել, մուսում են «Ղարապօլտան», «Ալշով» քաղաքը, «Եղով». այդ բոլոր տեղերում ցնծությամբ ընդունում են և հանապարհ դնում: Նրանք գալիս են «Աղթարիսան» և ապս դառնում են Կ. Պոլիս:

«Հիրեր եկին մեզ աննընան,  
Զինց ըգիրեշտակը Աքրահամեան,  
Ունց Ստամպօլիք զնոսս տեսան,  
Տեսոն Ասոուծոյ շատ գոհացան»:

Այնուհետև նվիրակները դավադրության զնի են գնում և փաշայից գլխատման դատապարտվում:

«Յովհաննու պէս գըլիատեցան  
Կամ Յակորու առաքելեան,  
Որ է մարմինն ի ըսպանման,  
Զատուր երրորդ անթաղ մընան:

Սրբոց մարմինը, որ հոն կեցան,  
Ոչ յերեսներն թարշանեցան,  
Լոյսն էր իշեալ աստղանման,  
Զայն լոյս տեսքով շատ մըրման»:

Հետո հայերը գնում են, Վեգիր Ալի փաշայից խնդրում, որ թուլլատրի սրբերի մարմինը թաղելու մեր եկեղեցական ծեսով. ստանում են թուլլատվություն, ու կատարվում է հուղարկավորության մեծ համեստ. թաղման համեստին ներկա են և լալիան կայք, եղերամայրեք:

«Կանայք բազում ժողովեցան,  
Լալիաներ ողբերգական,  
Շատ լացուցին զամենեսեան,  
Մինչ սար ո ձոր ի լաց երան»:

Երեք համաստակ նվիրակների աճյունները մի դամբարանի մեջ ամփոփում են:

Մովսես Գ Խոտանանցի կամ Տաթևացի կաթողիկոսը (1629—1632) վարդապետանան գավազան է տախի Փիլիպպոսին (հետո կաթողիկոս) և եպիսկոպոս ձեռնադրելով ուղարկում է նվիրակության «Յունաց աշխարհը»: Նա լոր առաքին վարը ու բարեզը և լոր գործի հմտությամբ մեծ տպավորություն է թողնում ժողովրդի վրա, որով և նրա նկատմամբ կազմվում է հետևյալ գրուցը, որ լսել է Զաքարիա սարկավագը Կարինում:

Փիլիպպոսի նվիրակության ժամանակ Կարինում գտնվում էր Մինաս անոնով մի վարդապետ, որ երածշտության մեջ հմտության խիստ գորող, հանդուգն, ինք-

նահավան և բնավ չեր խոնարհվում ոչ ոքի առաջ: Մի օր երեկոյան ժամասացությունն է կատարում, մերկա է և նվիրակը, որը նկատում է Մինաս վարդապետի սիսալը, զգուշացնում է նրան, սակայն նա յուրն է անում և դուրս գալիս եկեղեցոց: Ժամասացության վերջում նվիրակը մի պատշաճն քարոզ է խոսում և ակնարկում Մինաս վարդապետի տգիտությունը եկեղեցական խորհուրդների մեջ և նրա քմահաճորեն վարվելը: Մինասը լսում է դրան մոտից այդ և նախաձնով լցված գնում է իշխանի մոտ և: Փիլիպպոսն շարախոսում, զրպարտում է ասելով. «Պարսից աշխարհից մի արեղա է եկեղեց այստեղ ու մեր երկրից շատ դրամ և նավաքել պարսիկներին տալով, որ զան ավերեն մեր աշխարհը. բացի դրանից ամիջուս և հայտնում է ձեր ազգությունը. թե Օսմանին, թե Օսմարին նկովում է»: Զայրանում է փաշան, ուղարկում է Յ ենիշարի զինվոր, որ քարշ տաղով բերեն նվիրակին: Ենիշարիները գալիս են, տեսնում Փիլիպպոսին շրջապատված քաղաքացիներով. հայտնում են փաշայի հրամանը. նա առնում է 2 մու՞ պահելով փիլոնի տակ գնում և, նրա մետ և բազմությունը. նվիրակը ներս է մտնում, գոյուս տախու փաշային. սա հայտնում է Մինասի ասածները: Փիլիպպոսը, որ դժվարանում էր տաճկերեն խոսել, թարգմանի բերանով ասում է, որ ինքը յուղավաճառ է և այդ միջոցով է փող հավաքել, իսկ Մինաս վարդապետի հաղորդածը՝ զրպարտություն միանգամայն. ապա փիլոնի տակից հանում-տախու է փաշային 2 մումը, որոնք փաշայի ձեռքին կպչում են ու փառվել սկսում «սուրբ հոգու շնորհի»: Փաշան այդ հրաշքի վրա սոսկում է և վարդապետին ազատ արձակում. սակայն հսկոյն հետ է կանչում՝ երբ շրջապատողներից իմանում է, որ նա սուրբ մարդ է և շատ հրաշքներ է գործում: Փաշան ասում է, որ երաշտ ժամանակ է, բոլոր երկիրը չորացել է, երեւ կարող է, թող անձնը թափէ: Վարդապետը պատասխանում է. «Ողորմութիւնն Աստոծոյ բազում է, բայց տաճեկը ոչ թողուն զմեզ աղօթել ըստ օրինաց մերոց»: Փաշան ապահովում է նրա աղօթքի ազատությունը: Փիլիպպոսը մտնում է «Միհարսից Աստուածածին» եկեղեցին. հրամայում է բոլոր եկեղեցականներին զգեստավորվել, ինքն էլ պատարագի զգեստներն է հագնում,—առնում է վրան եմիկորնը, թագը դնում գիմին և ձեռն առնում խաչը. Ավետարանով, խաչով, ծնծղայով, զանգակների հնչմամբ դուրս են գալիս եկեղեցուց ու սկսում շարական ասելով շրջել քաղաքում: Դուրս են գալիս քաղաքի հյուսիսային կողմը, որ ասկում է «Սուրբ Նշանի թլուր»: Երբ

երգում են՝ երկինքն սկսում է ամպել. հենց որ հասնում են սահմանված տեղը, «Ակսում է ցողել». երբ կարդում են Ավետարանը՝ Յ անգամ ամպը գոռում է. երբ թափորն սկսում են, երկինքը բացվում է և հորդ անձրեն թափում. թափորի ավարտմամբ՝ արդեն դաշտը ծով է դառնում: Այս երկու հրաշքները տեսնելով փաշան բռնում է չարախում Մինաս վարդապետին և սուզանքի ենթարկում, որ մյուս անգամ զրպարտությունից հեռու մնա՞:

Թե՛ վերոհիշյալ բանաստեղծությունը, թե՛ այս զրուցը, գալիս են ապացուցելու, թե՛ Ավերակներն ինչ սիրելի և օգտավետ գործիչներ էին մեր հավատացյալ ծողովրդի համար:

Սակայն մեր բոլոր նվիրակներն ել հիանալի, օրինակելի անձնավորություններ չեն եղել, նրանց մեջ ևս պատահել են ապիկար հոգևորականներ, որոնք «Առիրակ» նվիրական անվան տակ գործել են շատ անհեթեթություններ, այդ անունով շահագործել են ծողովուրդը և բազմաթիվ գեղծություններ գործելով իրենց անձնական շահներ ի նկատի ունեցել: Դրանք, սակայն, չեն կարող, հարկավ, նսեմացնել «Առիրակութեամ» պատվական հշանակությունը:

Մեր մեջ զիսավորապես ավելի ապիկար նվիրակներ հանդես են գալիս Մելքիսեթ կաթողիկոսի ժամանակ. այն Մելքիսեթի, որ անձնական շահի համար տիսրահոչակ Նիկոլ Թորոսովիչին եսիսկուպու ձեռնաւրեց ու լեհահայոց վրա առաջնորդ կարգեց, որն և եղավ պատճառ հայերի դավանակիության ու կորստյան: Մելքիսեթի ժամանակ և Էջմիածինը վաստ դրուժան էր հսկել. զարդերն, անորմերը վաճառված էին կամ պարսիկ խաների մոտ գրավ դրված. եկեղեցականներն իրենց կոչման հակառակ ամեն գործի մեջ մտնում էին ու ձեռնարկում. գավառներումն էլ դրությունը նույնի էր: Սակայն համատարած թշվառության խափարի մեջ մեկ-մեկ ճրագներ էին պլայրում: Վասպուրականում, օրինակ, դեռ իրենց կոչման վրա բարձր կանգնած հոգևորականներ կային, որոնք ծողովրդի ներկայացուցիչների հետ միասին մի մեղադրական թույլը են ուղարկում Մելքիսեթին: Ի միջի այլ մեղադրական կետերի հիշված է և հետևյալը. «...Եւ երկրորդ անկարգութիւն այն է, որ թէ յինչ երկիր, որ նուիրակ յուղարկեան նա կու ընտեսն՝ յոր տեղ, որ չար և լիբը, անզգամ, անամօթ և ամբարտաւան

<sup>7</sup> Այս զրուցը պատմում է Զաքարիա սարկավագին Բիշյալ Մինաս վարդապետի աշակերտ Կարմեցի Հովհան վարդապետը: Զաքարիա սարկավագ, հատոր Բ, Վաղարշապատ, 1870 թ., էջ 29:

մի կալ, որ ոչ յԱստուծոյ երկնչի և ոչ ի մարդկանց ամաչէ, զայնպիսիքն կու առաքեա, որ զարդարեալ երիվարօք և պճնեալ հանդերձիք և կրկին պաշտօնէիք գան և զոռոզարար խրիստան, և բազում ցոփիթեամբ և անկարգութեամբ և արբեցողութեամբ զաշխարհն վլորվեն:

...Գրոց ամենինին անտեղեակ են և օրինաց ընալին անծանօթ, և բոլորովիմբ ոչ ճանաչեն զիաւատս քրիստոնէութեան, թէ զինչ է: ...Զարդարն և զանմեղն դատապարտեն վասն ընչից, և զանիրան իրաւացուցանեն վասն կաշառաց, և ազգապետութեան հրաման տան վասն արծաթոյ: ...Գիտեմք թէ սոքա ի՞նչ կու հասուցանեն ի ս. Աթոռոդ ի ձեռս Վեհիդ, զի վասն ազահութեան իրեանց շրջին և ոչ վասն օգսի սոքք Տանի, զի զինչ որ ժողովեն, ի գինս

այնպիսի երևելի հանդերձի տան, որ ոչ վայել է քրիստոնէի և ոչ իշխանի, թող թէ կարգատրի... Եթին իբրև գրուատրու և պճնին, և ի կերակորու և լընկելին ծախճն զժողովեալս իրեանց, յորով կաշառու տան բունաւորաց և բազում տուգանս այլազգաց վասն հակառակաւէր բարոց իրեանց, վասն որոյ ազգս Հայոց տաղուկացեալ է ի զարշահուտութենէ վարոցն այսպիսեաց»<sup>8</sup>:

Այդ ընդհանուր տեսությունից հետո, տեսենք, յուրաքանչյուր կաթողիկոսի գործությունը նվիրակության ասպարեզում առանձին-առանձին:

(Ծարունակելի)

<sup>8</sup> Առ, Հայկակ. տպագր., Բան. Ա, էջ 144—146: Այս մասին տես նաև Առաքել պատմագիր, գլ. Իմ, նաև Կեր, Հայկ. տպ., Բ տիպ, էջ 82: